ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ ՇՎՏՄ) ղեկավար Արմեն Կոտոյյանը, նույն մարմնի ղեկավարի տեղակալ Արթուր Մկրտչյանը սույն թվականի հուլիսի 1-5-ը ուսումնական նպատակով գտնվել են Բելգիայի Թագավորությունում (Բրյուսել) և Ֆրանսիայի Հանրապետությունում (Փարիզ)՝ համաձայն նախապես ներկայացված ծրագրի օրակարգի:

Միջոցառումը կազմակերպվել է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO)-ի կողմից իրականացվող «Աջակցություն որակի ենթակառուցվածքներին Հայաստանում» ծրագրի շրջանակներում Եվրոպական Միության և չափագիտության միջազգային կազմակերպությունների հետ կազմակերպվող ուսումնական այցին մասնակցելու նպատակով:

Այցերի ընթացքում ՇՎՏՄ-ի աշխատակիցները ծանոթացել են միջազգային չափագիտական կազմակերպությունների գործունեությանը, ինչպիսիք են՝ Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությունը (այսուհետ՝ ՕՉՄԿ) և Կշիռների և չափերի միջազգային բյուրոն (այսուհետ՝ ԿՉՄԲ): Կազմակերպվել են այցեր համապատասխան լաբորատորիաներ:

Հանդիպումների արդյունքում, շեշտադրվել է ՕՉՄԿ-ին և ԿՉՄԲ-ին Հայաստանի անդամակցության հարցը, որի իրականացման համար առաջարկվում է պլանավորել ակնկալվող գործողությունների շղթան, ինչպես նաև քննարկվել են հետագա համագործակցության հեռանկարները:

Միաժամանակ, կարևորվել է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO)-ի և Հայաստանի միջև համագործակցությունը որակի ենթակառուցվածքների զարգացման համատեքստում:

Իրականացվել է այց Ֆրանսիայի Չափագիտական Ինստիտուտ, որտեղ մասնակիցները ծանոթացել են Ազգային իրավական դաշտին, մասնավորապես՝

չափագիտության կանոնակարգերը կիրառելու գործիքներին (MID/NAW/PPP): Ներկայացվել է Եվրոպական Միության հավատարմագրման, ստանդարտացման կարգն ու շրջանակը:

Հատկանշական է, որ Բրյուսելում կայացած այցի ժամանակ մասնագետի կողմից քննարկումներ են նախաձեռնվել շուկայի վերահսկողության և ապրանքների ներքին շուկայի օրենսդրության, մասնավորապես՝ օնլայն առևտրում առկա խնդիրների, ինչպես նաև՝ մինչ շուկայահանումը հնարավոր վերահսկողական գործառույթներ ունենալու վերաբերյալ:

Անդրադարձ է կատարվել Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) շրջանակում առևտրի դիվերսիֆիկացիայի խրախուսմանը, մարտահրավերներին ու զարգացման հեռանկարներին:

Կատարված այցերի արդյունքում ՇՎՏՄ-ն նախատեսում է քայլեր ձեռնարկել օրենքների հնարավոր մոտարկման և/կամ կիրառվող օրենքների լավարկման շուրջ, ինչպես նաև հետամուտ է լինելու վերահսկողական գործառույթների ու ձեռքբերված գիտելիքների կիրառմանը, համագործակցության շղթայի ընդլայնմանն ու կայունացմանը: